

Թիւ 26870
Մայիս 1, 1980

Մեծայարգ
Տիար Պարզեւ Խոճաննեան
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
ծխական Խորհուրդի Ատենապետ
Թորոնթօ.

Յարգելի Տիար Խոճաննեան,

Թեմական Խորհուրդի Ապրիլ 18, 1980 Նիստին մէջ նկատի ա-
ռինք Գանատայի Առաջնորդի Փոխանորդ Հոգշ. Տ. Վազգէն Շ. Արդ.
Քէշիշեանի Ներկայացուցած հարցը Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ
անդամներէն Տորթ. Վահէ Սվաճեանի Պատկի Խորհուրդը Ս. Երրոր-
դութիւն Եկեղեցւոյ մէջ կատարելու կապակցութեամբ, եւ ժեզի
կը յայտնենք մեր որոշումը, ըստ որում՝ Տորթ. Վահէ Սվաճեա-
նի Պատկի Խորհուրդը արաօնել որ կատարուի Ս. Երրորդութիւն
Եկեղեցւոյ մէջ, եթէ կանոնական արգելք գոյութիւն չունի:՝

Հեռաժայնի Վրայ ժեզի արուած մեր բացատրութիւններէն յե-
տոյ հետեւեալ հեռագիրը սաացանք ծխական Խորհուրդին սաորա-
գրութեամբ.

"VANE SIVAJIAN WEDDING WE HAVE BEEN RELAYED THAT THE WEDDING BE
HELD IN OUR CHURCH WE DECIDED UNANIMOUSLY TO COMPLY PROVIDED
WEDDING CERTIFICATE AND MARRIAGE LICENCE IS ISSUED BY HOLY
TRINITY PARISH COUNCIL."

Ծխական Խորհուրդին իրաւասութիւն չէ արուած միջամուխ ըւ-
լալու Եկեղեցւոյ Խորհուրդներու կատարման կարգադրութեանց:

Նկատի ունենալով Օնթարիոյի ֆրանք, մեր թեմի համայնքներէն

Հեմիլթընի Ս. Աստուածածին եւ Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցիներու ծխականներէն ոեււ մէկը կրնայ զործածել Ա. Երրորդութիւն Եկեղեցիին սրբավայրը Խորհուրդներու կատարման համար, իր Հոգեւոր Հովիւին եւ կամ ծխական Խորհուրդին միջոցաւ -- եթէ Հոգեւոր Հովիւ չունի համայնքը -- անհրաժեշտ կարգադրութիւնը ընելով Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին կամ ծխական Խորհուրդին հետ -- եթէ Հոգեւոր Հովիւ չունի համայնքը -- : Այդ պարագային Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին կողմէ նշանակուած կամ ակնկալուած նուերը կը արուի Ենթակային կողմէ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի գանձապահին : Խսկ վկայականը կը արուի այն Եկեղեցիին կողմէ որուն անդամ է Ենթական :

Տոքթ. Վահէ Սվածեանի ամուսնութեան կապակցութեամբ Պողշ . Տ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան կարգադրութիւններ կատարած է Պակի Խորհուրդի կատարման համար :

Կը հրահանգենը որ ծխական Խորհուրդը արգելք չյարուցանէ եւ ըստ այնմ հաղորդէ Տոքթ. Վահէ Սվածեանին, Յունիս 1ին համար ծրագրուած Պակի կապակցութեամբ :

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ